

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԽԼՂԱԹՅԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՄԱՄՅԱԿԻ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի հյուրեր, ավագանու անդամներ, համագյուղացիներ.

2016 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Տարոնիկ համայնքում  
իրականացվել են

աշխատանքներ, որոնք նպատակաուղղված են եղել համայնքի սոցիալ-  
տնտեսական զարգացմանը և համայնքի բնակիչների կենսամակարդակի  
բարձրացմանը:

2016 թվականի ընթացքում Տարոնիկի գյուղապետարանը իրականացնելով  
Հայաստանի Հանրապետության կառավարության, Արմավիրի մարզպետարանի,  
ինչպես նաև համայնքի ավագանու կողմից ընդունած որոշումները զգալի  
աշխատանքներ է իրականացրել համայնքի առջև դրված խնդիրների բարեհաջող  
լուծման համար: Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է բնակչության  
կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման հարցերը: Համայնքի  
փողոցներում ամենօրյա գրաֆիկով կազմակերպվում է աղբահանություն  
պահպանելով համայնքի սանիտարահիգիենիկ նորմերը: 2016 թվականի ընթացքում  
կազմակերպվել և անցկացվել են Բաևակի տոնին, Մարտի 8-ին և, Եղեռնին ,  
Վերջին Զանգին, Հունիսի 1-ին, Ուսուցիչների օրվան, Նոր Տարվան նվիրված  
միջոցառումներ:

Մարտի 8-ի կապակցությամբ գյուղապետարանի, դպրոցի և մանկապարտեզի  
բոլոր կին աշխատողներին հանձնվել են նվերներ և ծաղկեփնջեր: Բոլորիս  
համար ավանդույթ դարձած վերջին զանգի առթիվ ինչպես անցած տարիների  
ընթացքում , այնպես էլ այս տարի մեր շրջանավարտները և ուսուցիչները եղան  
գյուղապետարանի ուշադրության կենտրոնում՝ երանց համար կազմակերպվեցին  
մի շարք միջոցառումներ ավարտական երեկո , էքսկուրսիա Հայաստանի

- Պարբերաբար կազմակերպվում է համայնքի համրային սննդի և առևտրային կետերում ստուգումներ, որոնք համապատասխան եզրակացություններով, կից գրությունով ամեն եռամսյակ ուղղարկվում է մարզպետարան:
- Համայնքի ղեկավարին է դիմել համայնքի բնակչության մեծ մասը տարբեր կենցաղ կոմունալ հարցերով և ստացել բավարար պատասխաններ իրենց հուզող հարցերի շուրջ:
- Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 19 անձից որոնցից ութը համայնքային ծառայողներ են, մեկը համայնքի ղեկավարի տեղակալ, պայմանագրային և տեխնիկական աշխատողներ:
- Գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզը 2014թ. չի գործում շեքի վթարային լինելու պատճառով:
- Համայնքում գործում է «**Խնամակալության և հոգաբարձության >>հանձնաժողով**,որի հիմնական խնդիրն է անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումը:
- Համայնքը ունի գրադարան 4290 կտոր գրականություն, որից օգտվել են 410 ընթերցողներ:

Ֆինանսական բաժին – 2016 թվականի ընթացքում վճարվել է 24353.2 հզ դրամ աշխատավարձ:

Համայնքի առավել անապահով բնակիչներին տրամադրվել է սոց. օգնություն 5614.6հզ դրամ: Սպորտ և երիտասարդական ծրագրեր հողվածից ծախսվել է 3900.0հզ դրամ:

Կատարվել են այլ ծախսեր ապարատի պահպանման, սպրանքների գնման և ծառայությունների ձեռք բերման համար 23691.1 հզ դրամի չափով:

2016թվականի համար հողի հարկը նախատեսվել է 4500.0հզ դրամ, որից հավաքագրվել է 4699.2 հզ դրամ ,փոխադրամիջոցների գույքահարկը նախատեսվել է 3430.6հզ դրամ ,որից հավաքագրվել է 3788.7 հզ դրամ, շեք-շինությունների հարկը նախատեսվել 4170.0հզ դրամ , որից հավաքագրվել է 4170.6հզ դրամ, վարձակալական հողի հարկը նախատեսվել է 200.0 հզ դրամ , որից հավաքագրվել է 207.0 հզ դրամ:

տեսարժան վայրեր: Հունիսի 1-ին Երեխաների Պաշտպանության Միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում համայնքի բոլոր փոքր երեխաների մասնակցությամբ:

- Համայնքի ղեկավարի մոտ կազմակերպվում է ամենօրյա ընդունելություն:
- 2016թվականի ընթացքում համայնքի ավագանու կողմից կայացել է 13 թվով նիստ, որոնց որոշումները հաստատվել են առանց առարկումների:
- Ընդունվել է համայնքի ղեկավարի 49 որոշում և արձակվել է 21 կարգադրություն:
- Համայնքի բնակչությանը գյուղապետարանի կողմից տրամադրվել է թվով 680 բազմաբնույթ տեղեկանքներ:
- Ստացվել է 300 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և պատասխանվել ըստ կարգի:
- Գյուղապետարանից ուղարկվել է 180 պաշտոնական գրություն:
- Ստացվել է 82 դիմում, որոնք քննարկվել են և ստացել համապատասխան լուծում:
- Գյուղապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության:
- Գյուղապետարանը տարածքային զինկոմիտայատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցեում է հասցեատիրոջը և հետևում է, որ ժամանակին ներկայանան զինկոմիտայատ:
- Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:
- Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հոդամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ:
- Տարոնիկ համայնքում կազմակերպվել է աղբաթափման աշխատանքները, այն կատարվում է շաբաթը երկու անգամ:
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է էլեկտրամատակարարման, գազամատակարարման ծառայությունները իրականացնող աշխատակիցներին: